ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2017 թվականի N 486 - Ա

ԼԻԱԶՈՐ ԱՆՁ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 59.2-րդ հոդվածի 4-րդ և 59.3-րդ հոդվածի 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Հայաստանի Հանրապետությունում «Հայաստանի իրավազորություն» ծրագրի շրջանակներում օտարերկրյա իրավաբանական անձի գրանցման նպատակով և օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի ռեդոմիցիլացման համար նախնական գրանցման մասին դիմումը, օրենքով նախատեսված տեղեկություն-ները և փաստաթղթերը գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու համար որպես լիազոր անձ ճանաչել «ՀՀ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒ-ԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. մայիսի 12
Երևան

486k.voroshum